«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 98 546 497
welcome@aybschool.am
www.aybschool.am

Արձանագրություն
№ ASBT06-2301-C (2302)

«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 6-րդ գումարման հոգաբարձուների խորհրդի նիստի

Ամսաթիվ՝	23 փետրվարի 2023 թ.
Անցկացման վայր՝	«Այբ» դպրոց, ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11/ Zoom հարթակ
Նիստի սկիզբ՝	09:30

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Հոգաբարձուների խորհրդի (ՀԽ) անդամներ՝
Ռուբեն Հարությունյան - ՀԽ նախագահ, (առկա),
Արտավազդ Մինասյան, (առկա),
Դավիթ Փախչանյան, (առցանց),
Լիլիթ Մինասյան, (առկա),
Ռիմմա Անանյան, (առկա),
Իրինա Գեյկո, (առկա),
Սարգիս Բաղալյան, (առկա),
Վասկեն Յակուբյան, (առցանց),

Նիստին չեն մասնակցել՝
Աշոտ Մկրտչյան,
Արսեն Գալստյան,
Տիգրան Հարությունյան:

Նիստին մասնակցել են հոգաբարձուների խորհրդի տասնմեկ անդամից ութը, ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը:
Առանց ձայնի իրավունքի նիստին մասնակցել են.
Դավիթ Սահակյանը (գործադիր տնօրեն), (առկա),
Հայկ Պողոսյանը (Գործառնական տնօրեն), (առկա), (մասնակցել է հարց 3-ին)
Նելլի Բալայանը (Ֆինանսների կառավարիչ), (առկա), (մասնակցել է հարց 3-ին)
Մերի Հովսեփյանը (Ակադեմիական տնօրեն), (առցանց), (մասնակցել է հարց 4-ին)

Նիստի քարտուղար ընտրվեց Սիրանուշ Սուքիասյանը, (առկա):

Հարց 1. Օրակարգի հաստատում: Հարցեր, որոնք այս օրակարգում ընգրկված չեն եղել:
Որոշում՝ հարց 1

Որոշվեց հաստատել ՀԽ-ի նիստի 2023 թվականի փետրվարի 23-ի օրակարգը:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 2. Նախորդ նիստից անցած ժամանակահատվածում դպրոցի աշխատանքների մասին հակիրճ տեղեկություններ:
Որոշում՝ հարց 2 *Որոշվեց Հավելված 3-1-ի 26, 35, 39, 40, 41, 42, 43, 49 և 54 կետերը համարել հաստատված:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 3. Հաջորդ ուսումնական տարվա ուսման վարձի սահմանում:
Որոշում՝ հարց 3 *Որոշվեց.* *Առաջնորդվելով «Այբ» դպրոցի ուսման վարձի սահմանման քաղաքականության դրույթներով (հաստատված 07 հուլիսի 2022 թվական)՝ 2023-2024 ուսումնական տարվա համար .* *1. ուսման վարձի բազային դրույքը սահմանել 3,130,000 ՀՀ դրամ՝ 2022-2023 ուսումնական տարվա բազային դրույքն ինդեքսավորելով 4,33 %-ով:* *2. Վերանայել տրանսպորտային փոխադրման արժեքը .* *2.1. «Այբ» դպրոց ընդունված բոլոր նոր աշակերտների համար տրանսպորտային փոխադրման արժեքը 2023–2024 ուստարվա համար սահմանել տարեկան 290,000 ՀՀ դրամ,* *2.2. 2023-2024 ուսումնական տարվանից սկսած յուրաքանչյուր ուսումնական տարում կատարել տրանսպորտային փոխադրման արժեքի ինդեքսավորում նախորդ օրացուցային տարվա գնաճի չափով:* *2.3. Մինչև 2023-2024 ուստարին «Այբ» դպրոց ընդունված տարրական և միջին դպրոցի աշակերտների համար տրանսպորտային փոխադրման արժեքը 2023-2024 ուստարում սահմանել 195,840 ՀՀ դրամ:* *2.4. Մինչև 2023-2024 ուստարին «Այբ» ավագ դպրոց ընդունված աշակերտների համար տրանսպորտային փոխադրման արժեքը 2023-2024 ուստարում սահմանել 173,760 ՀՀ դրամ կամ ըստ ֆինանսական աջակցության որոշման:* *2.5. Տրանսպորտային փոխադրման բաղադրիչի նոր արժեքը՝ 290,000 դրամը (հետագա գնաճային ինդեքսավորմամբ) 2022-2023 ուստարում «Այբ» դպրոցի ընթացիկ աշակերտ հանդիսացող երեխաների համար կսկսի գործել 2024-2025 ուսումնական տարվանից և կկիրառվի 5-րդ և 10-րդ դասարան անցման պահին:* *3. 2023-2024 ուստարվանից սկսած աշակերտների առողջության ապահովագրության ծախսն ամբողջությամբ կատարել դպրոցի հաշվին՝ կատարելով համապատասխան փոփոխություն ուսումնառության պայմանագրերում:* Որոշումը կայացված է միաձայն: **Հանձնարարություն.** Դ. Սահակյանին՝ ապահովել 2023-2024 ուստարվա ուսումնառության պայմանագրերի համապատասխանեցումը տվյալ որոշմանը:
Հարց 4. ԴԿԴ-ից, «Այբ» միջին դպրոցից և բաց ընդունելությամբ ընդունված 10-րդ դասարանցիների արդյունքների դինամիկայի վերաբերյալ հաշվետվություն:
Հարց 5. Դպրոցի կամպուսի զարգացման ընթացիկ իրավիճակի հաշվետվությունը:
Հարց 6. «Այբ» հիմանադրամի ՀԽ-ի առաջարկությունը ««Այբ» դրամագլխի ձևավորման և օգտագործման» քաղաքականության վերաբերյալ :

Որոշում՝ հարց 6 *Որոշվեց.* 1. *Արձանագրել, որ 2021 թ. հաստատված քաղաքականությունն առավելապես տեսական ձևակերպումներ ունի և ոչ ամբողջությամբ է համապատասխանում այն գործընթացներին, որոնք վերաբերում են համայնքային դրամահավաքին, ուստի հնարավոր են իրավիճակներ, երբ քաղաքականության որոշ դրույթներ կարող են ամբողջությամբ չպահպանվել:* 2. *Հիմք ընդունելով վերոնշյալը՝ հանձնարարել դպրոցի տնօրենությանը, ֆինանսաբյուջետային հանձնաժողովի շրջանակում, մշակել և հաստատման ներկայացնել նոր քաղաքականություն: Նոր քաղաքականության մշակումն իրականացնել հիմնադրամի հետ համատեղ:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 7. Ավարտական հանդիսության ավարտի երգի փոփոխության առաջարկ:
Կետ 8. ՀԽ-ի հաջորդ նիստին առաջարկվող հարցեր: Բոլոր հարցերը ներկայացնել մայիսի 4-ի նիստին, եթե այլ բան չի նշված հանձնարարության վերաբերյալ:
Կետ 9. Նիստի ավարտ Հանդիպումն ավարտվեց ժամը 12:35-ին:

ՀԽ անդամներ

Արտավազդ Մինասյան _____

Դավիթ Փախչանյան _____

Լիլիթ Մինասյան _____

Ռիմմա Անանյան _____

Իրինա Գեյկո _____

Սարգիս Բաղալյան _____

Վասկեն Յակուբյան _____

ՀԽ նախագահ

Ռուբեն Հարությունյան _____

Նիստի քարտուղար

Սիրանուշ Սուքիասյան _____